Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բուսաբուծության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և գլխավոր քարտուղարի հրամաններով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը, բաժինների պետերը:

II.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

5. Վարչության հիմնական նպատակն է՝

իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորություններով

երկրագործության, սերմնաբուծության, այգեգործության և օրգանական գյուղատնտեսության ոլորտներում (այսուհետ՝ ոլորտ) տարվող պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը և իրականացումը:

6. Վարչության խնդիրներն են.

1) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակական ցուցանիշների բարձրացում՝ ագրոտեխնիկական առաջադեմ տեխնոլոգիաների ներդրմամբ,

2) սելեկցիայի, սերմնաբուծության և տնկանյութի արտադրության համակարգի զարգացում,

3) հողերի բերրիության պահպանման, բարձրացման համալիր միջոցառումների ներդրման խթանում:

III.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են.

1) հանրապետության բուսաբուծության ոլորտի քաղաքականության մշակում և դրա առանձին ճյուղերի, երկրագործության (դաշտավարության, բանջարաբուծության, բոստանային և տեխնիկական մշակաբույսերի մշակության), պտղաբուծության, խաղողագործության, ծաղկաբուծության, սերմնաբուծության, տնկանյութի արտադրության իրավիճակի վերլուծություններ, խնդիրների վերհանում, գնահատումների ու կանխատեսումների իրականացում և դրանց արդյունքների հիման վրա առաջարկությունների ներկայացում, զարգացմանն ուղղված ծրագրային ուղղությունների մշակման ու միջոցառումների իրականացման գործընթացին մասնակցություն,

2) վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի

նախապատրաստում, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովում,

3) բուսաբուծության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն,

4) բուսաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակմանը մասնակցություն, իրականացում և ծրագրերի ընթացքի ուսումնասիրություն,

5) գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական դիտարկման, գնահատման և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրերի մշակմանը և իրականացման մոնիթորինգին աջակցություն,

6) օրենքով սահմանված կարգով բույսերի սորտերի փորձարկման, գրանցման և արտոնագրերի տրամադրման գործընթացին աջակցություն,

7) հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման գործընթացին աջակցություն,

8) սերմադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողների (ապրոբատորների) հավաստագրման գործընթացին աջակցություն,

9) օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջնային խնդիրների բացահայտում, պետական աջակցության ծրագրերի մշակմանը և իրականացման մոնիթորինգին մասնակցություն,

10) օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների հաշվառման գրանցամատյանի վարում,

11) հանրապետությունում բուսաբուծական արտադրանքի ծավալների կանխատեսում, փաստացի տվյալների վերլուծություն,

12) այլ գերատեսչությունների կողմից մշակված բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն,

13) բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

14) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացում,

15) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցություն,

16) տեղական և միջազգային կառույցներում բուսաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցություն,

17) վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստում,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) երկրագործության և սերմնաբուծության բաժին,

2) այգեգործության և օրգանական գյուղատնտեսության բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. **Երկրագործության և սերմնաբուծության բաժնի գործառույթներն են՝**

1) երկրագործության ոլորտի գործունեության, ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքների համակարգում, ոլորտում տիրող իրավիճակի բացահայտում, առաջնային խնդիրների վերհանում և դրանց լուծման համար առաջարկությունների ներկայացում,

2) երկրագործության և սերմնաբուծության զարգացման, գյուղատնտեսական հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների և բերրիության բարձրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի հավաստագրման և սորտափորձարկումների կազմակերպման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում,

3) ջերմատնային տնտեսությունների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին մասնակցություն,

4) բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման ապահովում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում:

5) Նախարարության ենթակայությամբ գործող, բուսաբուծության բնագավառին առնչվող մարմինների գործունեությանն աջակցություն կամ օժանդակություն:

6) այլ գերատեսչությունների կողմից մշակված բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն,

7) բուսաբուծության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

8) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացում,

9) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցություն,

10) տեղական և միջազգային կառույցներում բուսաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցություն,

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացում:

11. Այգեգործության և օրգանական գյուղատնտեսության բաժնի գործառույթներն են՝

1) պտղաբուծության, խաղողագործության և օրգանական գյուղատնտեսության ճյուղերի գործունեության համակարգում,

2) այգեգործության, խաղողագործության և օրգանական գյուղատնտեսության ճյուղերի գործունեության արդյունքում ստացված տվյալների ամփոփման, վերլուծության աշխատանքների համակարգում, ճյուղերում տիրող իրավիճակի բացահայտում, առաջնային խնդիրների վերհանում և դրանց լուծման համար առաջարկությունների ներկայացում,

3) մշակում և վարչության պետին է ներկայացնում խաղողագործության, պտղաբուծության, օրգանական գյուղատնտեսության կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը,

4) բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում:

5) այլ գերատեսչությունների կողմից մշակված բուսաբուծության բնագավառին առնչվող իրավական ակտերի, ծրագրերի, հայեցակարգերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների նախագծերի ուսումնասիրություն,

6) բուսաբուծության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին սահմանված կարգով մասնակցություն,

7) ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկում ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացում,

8) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցություն,

9) տեղական և միջազգային կառույցներում բուսաբուծության ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանը մասնակցություն,

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթների իրականացում:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիրազորությունների, շփումների և նեկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: